

# Նիկոլ Աղաբաբյան. «Արվեստը պիտի դիտողին դրական էներգիա հաղորդի»



Մեր կողքին ապրող ու ստեղծագործող Նիկոլ Աղաբաբյանի մեքենան շրջիկ արվեստանոց է հիշեցնում՝ ծանրաբեռնված կտավներով, ներկերով ու անհրաժեշտ բոլոր պարագաներով: «Այն օրերին, երբ դասի չեմ, Հայաստանի մարզերում եմ՝ Երևանից դուրս որևէ տեղ», – պատմում է Նիկոլը: Ընդ որում՝ նա ոչ միայն շրջել է մեր երկրով, այլև եղել է եվրոպական շատ երկրներում՝ ցուցահանդեսներ բացելով թե՛ հին աշխարհամասում, թե՛ Ամերիկայում: Առայժմ շուրջ 50 անհատական ցուցահանդես է ունեցել՝ սկսած իր ծննդավայր Կողբից մինչև Հռոմ, Վենետիկ, Կանն, Լիոն, Փարիզ ու Նյու Յորք:

Ինչպես Նիկոլն է պատմում, փոքրուց է սկսել «խզբզել», երբ իրենց գյուղում դեռ նկարչական դպրոց չկար: Սկզբում ընդօրինակել է ավագ եղբորը՝ հայտնի լրագրող Աշոտ Աղաբաբյանին, ապա ներշնչվել է հայրենի եզերքով: Այնքան գունեղ է պատմում գրուցակիցս իր մանկության սարերի ու ձորերի մասին, որ ակամա մեջդ ցանկություն է առաջանում երբևիցե լինել Հայաստանի այդ գեղատեսիլ անկյունում:

Նույնքան գունեղ է և Նիկոլի նկարչությունը: Սա այն եզակի դեպքերից է, երբ մարդու ձեռակերտած բնաշխարհը բնավ չի զիջում անձեռակերտին: Դա պարզորոշ երևում է նաև նկարչի վերջին պատկերագրքից, երբ կողք կողքի բնական տեսարանի վավերական լուսանկարն է և դրան գուգահեռ աղաբաբյանական մեկնաբանությունը:

Իհարկե, Նիկոլը հաճախ «գունազարդում է» բնականից անգույն կամ դժգույն տեսարանները՝ դաշտ լինի թե փողոց: Իր կտավներում նա հաճախ է արև նկարում, որի գույներով լուսավորում է նաև շրջապատի իրերը, երևույթներն ու մարդկանց: Որպես կանոն, նա կոնկրետ վերնագիր չի դնում իր կտավների տակ, չի նշում տեղանքի անունը, այլ իր մտքերն ու խոհերն է արտահայտում: Այսպես՝ Արցախի Քարինտակ գյուղը պատկերելիս վերնագրում է՝ «Հերոս չեն, բա ի՞նչ են»: Նատյուրմորտների տակ էլ հաճախ գրում է՝



«Ինչքան շատ եմ սիրում իմ չքնաղ երկիրը», կամ կարմիր կակաչներ վրձնելիս խորհրդածում է՝ «Ինչքան արյուն թափվեց»:

«Եթե կակաչ եմ նկարում, ի՞նչ տարբերություն, թե որտեղ է այն աճում»,– այսպես է պարզաբանում նկարիչը: Վերջինս իր հոգու պարտքը տարիներ անց հատուցեց հարազատ բնակավայրին, երբ ընկերների հետ հիմնեց նկարչական դպրոց: Հիմա այդտեղ ուսանելու են գալիս նաև հարևան գյուղերից:



Նիկոլ Աղաբաբյանի այսօրվա պես հիշում է 1986 թվականը, երբ Երևանի մանկավարժական ինստիտուտի նկարչագծագրական ֆակուլտետն ավարտելուց հետո աշխատանքի է մեկնել Տավուշի մարզի թուրքաբնակ Պտղավան գյուղը: Տարիներ անց պատմում է. «Ինչքան առարկա կար, ինձ էին տվել՝ պատմություն, կենսաբանություն, երգեցողություն: Ֆիդայական երգեր էի

սովորեցնում, որի պատճառով բողոքներ գնացին Երևան»: Թուրք-ադրբեջանցիների հեռանալուց հետո անդամագրվում է Անկախության բանակին՝ մասնակցելով ինքնապաշտպանական կռիվներին և հայոց սահմանների պաշտպանական մարտերին: Զինադադարներին միշտ նկարել է:

Նիկոլը մեր օրերի խաղաղությունը ժամանակավոր զինադադար է համարում: Ներկայում նա տենդագին ստեղծագործում է, աշխատում օրնիբուն և մեծ եռանդով: Նիկոլի նկարներն առանձնանում են ներկի հաստ շերտերի գործադրությամբ և դրանց էքսպրեսիվ արտահայտությամբ: Նրա համոզմամբ՝ այսօր ամեն ինչ արագացել է, և այս իմաստով արվեստը (ոչ միայն նկարչությունը) կարծես հետ է մնացել: Հարկ է, որ այն նոր ռիթմի մեջ մտնի, ավելի դինամիկ դառնա:

Փոփոխվող աշխարհի հետ, պարզ է, փոփոխվում են նաև արվեստի խնդիրները: Նիկոլն իրեն պատրաստ է համարում այդ զարգացումներին և ամեն անգամ չի զլանում նոր էջից սկսելու: «Հիմա էլ նույնն է: Ամեն անգամ՝ նոր խնդրի առջև կանգնելիս, սկզբից եմ սկսում»,– ասում է նա: Դիտելով մեկը մյուսից գրավիչ նրա աշխատանքները, որոնց թիվն արդեն անցել է մի քանի հազարից՝ համոզվում ես, որ նկարելը Նիկոլի համար արդեն վերածվել է ներքին պահանջի: «Շատ կարևոր է, որ նկարչությունը դրական լինի,– այսպես է նա մեկնաբանում իր արվեստը:– Այն պիտի դիտողին դրական էներգիա հաղորդի: Մշակույթի խնդիրը Աստծուց քեզ տրված շնորհը բարուն ու գեղեցիկին ծառայեցնելն է»:

Ամիսներով դրսում է եղել Նիկոլ Աղաբաբյանը, բայց վեց ամսից ավելի չի կարողացել դիմանալ: Այս առումով չի հասկանում նրանց, ովքեր տարբեր պատճառաբանություններով թողնում-հեռանում են հայրենիքից: Նրանց նա «դասալիքներ» է կոչում և բարձրաձայն խորհրդածում: «Ոչ մի բան չի արդարացնում արտագաղթը: Մեր ազգը պարտավորված է զինվոր լինելու: Հարյուրամյակներով պետականություն չենք ունեցել և, վերջապես, հազար տարի հետո մեծ գործ ենք արել, ու չի կարելի այն կիսատ թողնել»:



Լևոն Լաճիկյան